ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն, ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ն, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 4-րդ չափաբաժնի մասով ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

-1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի, ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի, Միկրորինգ ՍՊԸ-ի, Սվետան ՍՊԸ-ի, Մովսեսյան ՍՊԸ-ի հայտերը մերժել,

-4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Միկրորինգ ՍՊԸ-ի հայտը մերժել,

-5-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ի, Մովսեսյան ՍՊԸ-ի հայտերը մերժել,

-6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Մովսեսյան ՍՊԸ-ի հայտը մերժել,

-7-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Մովսեսյան ՍՊԸ-ի հայտը մերժել,

-8-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ի, Մովսեսյան ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2 1-ին, 2-րդ, 8-րդ չափաբաժինների մասով՝ ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված, իսկ 3-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

-ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա,

-գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան